Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն**
   ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. **Զբաղեցրածպաշտոնը**
   ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. **Գործուղմանվայրը և ժամկետները**
   Փարիզ, Ֆրանսիա (27/11-28/11) Բրյուսել, Բելգիա (28/11-30/11) Կոպենհագեն, Դանիա (30/11-03/12)Փարիզ, Ֆրանսիա (03/12-06/12)

4. **Հրավիրողկողմը**
   Փարիզ, Ֆրանսիա՝Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ՔԱՄԿ) Եվրոպայի և հյուսիս-ատլանտյան տարածաշրջանի տնօրեն Լուիս Ֆոնսեկա դը Ալմեյդա
   Բրյուսել, Բելգիա՝ Եվրոկոնտրոլի գլխամասը Բրյուսելում
   Կոպենհագեն, Դանիա՝ Հանդիպումներըկազմակերպվածենեղելմերկողմից:
   Փարիզ, Ֆրանսիա՝ Եվրոպական Քաղաքացիական Ավիացիայի Կոնֆերանսի (ԵՔԱԿ) գրասենյակ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   ՔԱՄԿ Եվրոպական Օդային Նավիգացիոն Պլանավորման Խմբի 60-րդ, ինչպես նաև Ռեգիոնալ Ավիացիոն Անվտանգության Խմբի 7-րդ հանդիպումները

   Գլխավոր Խորհրդի 50-րդ Նիստը, Եվրոկոնտրոլ

6. **Քննարկված թեմաները**

- Բրյուսելում Եվրոկոնտրոլի Գլխավոր Խորհրդի 50-րդ Նիստի ժամանակ քննարկվել են Եվրոկոնտրոլ կազմակերպության 2019-2023 թվականների ռազմավարական ծրագիրը:
- ՀՀ և ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու մասին նախաստորագրված համաձայնագիր

- Քննարկվել է, թե ինչպես դառնալ անկախ, ինքնաֆինանսավորվող հաստատություն
- Քննարկումներ ուղղությունների զարգացման հետ կապված՝ շեշտը հիմնականում դնելով դեպի Հայաստան բյուջետային ավիաուղիներ ներգրավելու վրա
- «Զվարթնոց» օդանավակայանի ընդլայնման խնդիրները
- Փոքր ավիացիայի զարգացում
- Անօդաչու թռչող սարքերի կարգավորում
- Քննարկումներ անվտանգության գծով, մեր վերահսկողության տակ գտնվող, բացթողումների մասին և թե ինչպես կարելի է դրանք լրացնել
- Քննարկումնե ոմարդկային գործոնի ազդեցության վերաբերյալ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Փարիզ, Ֆրանսիա՝(27/11-28/11;03/12-06/12)

Հանդիպում ՔԱՄԿ Եվրոպական և Հյուսիս Ատլանտյան Տարածաշրջանային տնօրեն Լուիս Ֆոնսեկա դե Ալմեիդայի հետ.

Հանդիպում Արմինե Գալստյանի՝ ուղղությունների զարգացման գծով մասնագետի հետ՝ հետագա հնարավոր համագործակցության թեմայով

Հանդիպում «Airbus Group» գրասենյակում՝ աջակցման ծառայությունների վաճառքի ղեկավար՝ Պասկալ Ռուհաուդի, վաճառքի գծով տարածաշրջանային տնօրեն՝ Պատրիկ Պելետիրի, հաճախորդների աջակցման ծառայության ղեկավար՝ Քարմեն Տրիգո Ռոմերոի և նոր պրոյեկտների ղեկավար՝ Ժակ Գարիգի հետ.

Հանդիպում ԵՔԱԿ նախագահ՝ Ինգրիդ Չերֆիլսի, քարտուղար՝ Սալվատորե Չիաչիտանոյի և ավիացիոն անվտանգության աուդիտի մասնագետ՝ Ադամ Բորկովսկիի հետ.

Հանդիպում ՔԱՄԿ տարածաշրջանային ղեկավարի տեղակալ՝ Էլկհան Նահմադովի և աէրոնավիգացիոն հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ՝ Քրիստիան Սշուլտեսսի հետ.

Հանդիպում Ալբանիայի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի նախագահի տեղակալ՝ Քրիսլեն Քեռիի հետ.

Հանդիպում Սլովակիայի Հանրապետության տրանսպորտի նախարարության ավիացիոն գծով ղեկավար՝ Մարիօ Նեմեթի հետ.

Հանդիպում Վրաստանի քաղաքացիական ավիացիայի նախագահի առաջին տեղակալ՝ Լևան Կարանադզեի հետ.
Հանդիպում Լեհաստանի քաղաքացիական ավիացիայի ղեկավար՝ Ջուլիան Ռոթերի հետ.
Հանդիպում Իսլանդիայի տրանսպորտային մարմնի քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության փոխտնօրեն՝ Հալա Սիգրուն Սիգարդարդոտթի հետ.
Հանդիպում Ուկրաինայի պետական օդային երթևեկության կազմակերպության ղեկավար՝ Դմիտրո Բաբեչուկի հետ.
Հանդիպում Ռումինական քաղաքացիական ավիացիայի մարմնի ղեկավարի տեղակալ՝ Սորին Էնցուտեսցու հետ.
Հանդիպում Մեծ Բրիտանիայի քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության համապատասխանության թիմի կառավարիչ՝ Քառոլ Քուզին-Վուդի հետ.
Հանդիպում ԿԱՊԱ ավիացիոն ընկերության գլխավոր ֆինանսական պատասխանատու՝ Ջոնաթան Վոբերի հետ.
Հանդիպում Թուրքիայի քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության բաժնի ղեկավար՝ Սեդրակ Կարաբուլուտի հետ.
Հանդիպում Ադրբեջանի քաղաքացիակ անավիացիայի ղեկավար՝ Արիֆ Մամմադովի հետ.
Հանդիպում Ավստրիայի տեխնոլոգիաների դաշնային նախարարության ռազմավարության և միջազգային քաղաքացիական ավիացիայի վարչության ղեկավար՝ Կարինա Ֆոգիա-Սաուերի հետ.

Բրյուսել, Բելգիա
Հանդիպում Ռումինիայի տրանսպորտի նախարարի՝ Լուսիան Սովայի հետ.
Հանդիպում Ժամանակավոր Խորհրդի նախագահ և Իսպանիայի Քաղաքացիական ավիացիայի ղեկավար՝ Ռաուլ Մեդինա Կաբալերոյի հետ.
Հանդիպում Եվրոկոնտրոլի գլխավոր տնօրեն՝ Էամոն Բրենանի հետ.
Հանդիպում ՄԱՏԿ գլխավոր տնօրեն՝ Ալեքսանդր դե Ջունիակի հետ.
Համառոտ ելույթ է տեղի ունեցել Եվրոկոնտրոլի ժամանակավոր խորհրդի ընթացքում կազմակերպության նախագահության և փոխնախագահության վերաբերյալ.
Հանդիպում Եվրահանձնաժողովի ներկայացուցիչ՝ Կլաուս Գեյլի հետ.
Հանդիպում Նավիէյր ընկերության միջազգային գծով տնօրեն՝ Սյուզան Իսակսենի հետ.

Հանդիպում Եվրոկոնտրոլի ավիացիոն գծով ավագ խորհրդատու՝ Նիկոլաս Լիրակիդեսի հետ.
Հանդիպում ավիացիոն համաձայնագրերի ռազմավարության մասնագետ՝ Էվա Զայդել Սիրիկինսկայի հետ.
Հանդիպում ԵԱԱԳ գործադիր տնօրեն՝ Պատրիկ Կիի հետ.
Հանդիպում Եվրոկոնտրոլի գլխավոր տնօրենի ավագ օգնական՝ Դենիս Ակունգի հետ.
Հանդիպում Դանիայի տրանսպորտի և քաղաքաշինության փոխնախարար՝ Կառե Կլեմենսենի հետ.

Կոպենհագեն, Դանիա
Հանդիպում Կրոնբորգ օդային խորհրդատվության ընկերության հիմնադիր և տնօրեն՝ Քենեթ Կրոնբորգի հետ.
Հանդիպում Կոպենհագենի օդանավակայանի Բանակցություններ մենեջեր՝ Էդդի Եգիզարիանի հետ.
Հանդիպում Կոպենհագենի օդանավակայանի ավագ մենեջեր, կոմերցիոն ռազմավարության և ուղղությունների զարգացման մենեջեր՝ Սայմոն Նաթանի հետ.
Հանդիպում Այցելիր Դանիայի շուկայի գծով տնօրեն՝ Օլե Վիտ Քրիստենսենի հետ.
Հանդիպում Դանիայի տրանսպորտի և կառուցման մարմնի գլխավոր տեսուչ՝ Անդերս Մադսենը, աուդիտոր՝ Հենրիկ Միկելսոն և քաղաքացիական ավիացիայի գլխավոր տեսուչ՝ Մեդս Հայսինգհետ.
Հանդիպում Ինգե Վրեդստրոմի հետ, ով ներկայումս հանդիսանում է հաստատության կառավարման կորդինատոր, նախկինում նա եղել է օդանավակայանի հին տերմինալի տեղափոխման պրոյեկտի մենեջերը

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Եվրոկոնտրոլ կազմակերպության սահմանված կանոնակարգի համաձայն յուրաքանչյուր տարի անդամ պետություններից մեկը պետք է նախագահի կազմակերպության մշտական հանձնաժողովում և կառավարման կոմիտեում: 2019 թվականին Եվրոկոնտրոլ կազմակերպության մշտական հանձնաժողովի և կառավարման կոմիտեի նախագահելու իրավունքը ստանձնել է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի: Կոմիտեի կողմից Եվրոկոնտրոլ կազմակերպության մշտական

հանձնաժողովի և Եվրոկոնտրոլ կազմակերպության կառավարման կոմիտեի նախագահ է առաջադրվել Կոմիտեի նախագահ Տաթևիկ Ռևազյանը, իսկ փոխնախագահ՝ Կոմիտեի Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության պետ Գալուստ Պողոսյանը:

- Եվրոկոնտրոլ կազմակերպության անվտանգության բաժնի Եվրոպական կամավոր ՕԵԿ զեկույցների հետաքննության մենեջեր Դրագիցա Ստանկովիչը խոստացել է հանդիպել Wizz Air ավիաընկերության ֆինանսական պատասխանատուի հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության հետաքրքրությունը տվյալ ավիաընկերության հետ համագործակցելու առնչությամբ:
- Եվրոկոնտրոլում հանդիպում է տեղի ունեցել Եվրոկոնտրոլ կազմակերպության տնօրեն ՝ պարոն Իմոն Բռենանի հետ, որի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր ուղղված Հայաստանի Հանրապետության և Եվրոկոնտրոլ կազմակերպության համագործակցության բարելավմանը: Ինչպես նաև քննարկվել է ՀՀ հետաքրքրվածությունը Հայաստանի շուկա բյուջետային ավիաընկերությունների, ինչպիսինն են Ryanair և Easyjet մուտք գործելու հնարավորությունը:
  Ձեռք է բերվել պայմանավորվածություն, որի համաձայն պարոն Իմոն Բռենանը հարցը կներկայացնի բյուջետային ավիաընկերությունների ղեկավարությանը, միառժամանակ նա նշեց, որ հարցը անմիջապես կարող է կապված լինել ՀՀ-ի և Եվրոմիության, Եվրոպական ավիացիոն ընդհանուր շուկայի համաձայնագրի ստորագրման հետ:
- Իսլանդիայի տրանսպորտային մարմինը՝ ի դեմս քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության փոխտնօրեն՝ Հալա Սիգրուն Սիգարդարդոտթը, համաձայնել է մեզ ներկայացնել Wow Air- ի (բյուջետային ավիաընկերություն) նախագահին, որպեսզի քննարկենք Հայաստանից դեպի ԱՄՆ լավագույն ուղիները:
- Ավստրիայի տրանսպորտի, նորարարությունների և տեխնոլոգիաների դաշնային նախարարությունը, Կարինա Ֆոգիա-Սաուերը (ռազմավարության և միջազգային քաղաքացիական ավիացիայի վարչությունը) կփոխանցեն անկախ կազմակերպությունների ցանկը, որոնք կարող են օգնել մեզ ավիացիոն ռազմավարության մշակման գործում:
- Մեծ Բրիտանիայի քաղաքացիական ավիացիայի ղեկավարությունը, Քառոլ Քուզին-Վուդը (Ավիացիոն անվտանգության համապատասխանության թիմի կառավարիչ), Լատվիայի քաղաքացիական ավիացիա ղեկավար Մարիս Գորոդցովը և Դանիայի տրանսպորտի և կառուցման մարմնի գլխավոր տեսուչ՝ Անդերս Մադսենը, աուդիտոր՝ Հենրիկ Միկելսոն և քաղաքացիական ավիացիայի գլխավոր տեսուչ՝ Մեդս Հայսինգը համաձայնել են մեզ օգնել ինքնաֆինանսավորվող կազմակերպություն դառնալու

գործում՝ տրամադրելով մատուցած ծառայությունների ցանկը և դրանց գնագոյացումը:

- «Airbus Group» - ը պատրաստ է աջակցել Հայաստանին «ազգային փոխադրող» բիզնես-պլան մշակելու գործում: Ժակ Գարեգին (Արևելյան Եվրոպայի փոխնախագահ) և նրա գործընկերները համաձայնել են այցելել Հայաստան ՝առաջին եռամսյակում աշխատանքային խմբերը ընտրելու նպատակով:
- Սիմոն Նաթանը (ավագ երթուղիների զարգացման գծով մենեջեր) համաձայնեց այցելել Հայաստան 2019 թ. երթուղիների զարգացման դասընթացներ անցկացնելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- ԻԿԱՕ, քննարկել եմ ԻԿԱՕ-ի անօդաչու սարքերի միջոցառման հնարավոր հյուրընկալումը, կապված ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջազգային կոնգրեսի հետ, որը տեղի է ունենալու 2019:
- Դաշնային ավիացիոն ադմինիստրացիայի հրավերն իրենց անօդաչու սարքերի կոնֆերանսին…
- ICAO (Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն)-ը, ECAC (Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանս)-ը, IATA (Միջազգային օդային տրանսպորտի ասոցիացիա)-ն, և Եվրոպական հանձնաժողովը, համաձայնեցին ավիացիոն համաձայնագրերի ղեկավարության հետ միասին այցելել Հայաստան 2019թ.-ին Ավիացիայի օրվա կապակցությամբ, որի ժամանակ քաղաքականություն մշակողներին կներկայացնենք քաղաքացիական ավիացիայի աշխատանքները, ՀՀ քաղաքացիական ավիացիան նոր մակարդակի հասցնելու նպատակով:
- Եվրոպական հանձնաժողովում, հանդիպում եմ ունեցել Քլաուս Գեյլի (ավիացիոն համաձայնագրերի ղեկավարի տեղակալ) և Էվա Զայդել-Սիրիկինսկայայի հետ, քննարկել ենք ՀՀ և ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու մասին նախաստորագրված համաձայնագրի հարցը, որի արդյունքում Գեյլը նշեց, որ վերոնշյալ պայմանագիրը նախատեսվում է ստորագրել 2019թ.-ի երկրորդ կամ երրորդ եռամսյակում:

- Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի աուդիտոր Ադամ Բորկովսկին, կներկայացնի աուդիտները մեր անվտանգության գնահատումների ցնշելով մեր անվտանգության բացերը:
- Հանդիպում եմ ունեցել Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության գործադիր տնօրեն Պատրիկ Կինի հետ, որի ժամանակ նա հայտնեց իր պատրաստակամությունը քննարկելու մարտահրավերները / ծախսերը կապված EASA-ի կողմից ՀՀ գրանցված օդանավ շահագործողների սերտիֆիկացման հետ:
- Նավիահիրը (Դանիական նավիագացիոն ծառայություն), Սյուսան Իսակսենը (Միջազգային գործերի գծով տնօրեն) և Դանիայի տրանսպորտի կառուցման և բնակարանաշինության մարմինները, Կաարե Կլեմմեզենի (գլխավոր տնօրենի տեղակալ) հետ միասին հրավիրեցին մեզ գիտելիքների փոխանակմանը և անհրաժեշտության դեպքում իրենց աջակցությունը առաջարկեցին մեր թիմին փորձով կիսվելու նպատակով:
- Կոպենհագենի օդանավակայանի բանակցությունների մենեջեր Եդդի Եղիազարյանի հետ հանդիպման ժամանակ, նա իր աջակցությունը հայտնեց ոչ օդային շահույթների աղբյուրները որոշելու հարցում և «Զվարթնոց» օդանավակայանում կոմերցիոն տարածք օգտագործելու լավագույն մոտեցումը:
- CORSIA (միջազգային ավիացիայի ածխածնի զտման և նվազեցման սխեմա) քաջալերել է մասնակցել ծրագրի միջոցառումներին:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

X _____